**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
Էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«12» հունիսի 2026 թվականի N 42-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝ Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու տասներորդ նստաշրջանի վեցերորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանիներ.

Կողմ Դեմ Ձեռնպահ

Արմեն Գրիգորյան
Վարսիկ Ասրյան
Անուշ Բաղդասարյան
Ատոմ Գագինյան
Արմեն Փ. Գրիգորյան
Արմեն Դավթյան
Արծրուն Հակոբյան
Ջոն Կիրակոսյան
Սյուզաննա Նազարյան
Մարտուն Մարտիրոսյան
Հմայակ Մարտիրոսյան
Աղունիկ Նալբանդյան
Լևոն Պապյան
Անդրանիկ Տոնոյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

**ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՆԻՍՏ**

12.06.2026թ. ք. Ստեփանավան

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Գ. ՇԱՀԲԱԶՅԱՆ**

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Է. ՌԵՎԱԶՅԱՆ**

4. ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԸ ԿԱԶՄՈՂ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Հ. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

5. «ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Հ. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

6. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

7. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14 ԱՊՐԻԼԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ N 32-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

9. ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՅՈԹԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Հ. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
Էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«12» հունիսի 2026 թվականի N 43-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օերնքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 110-Ն որոշմամբ հաստատված համայնքի 2026 թվականի բյուջեում կատարված փոփոխությունները համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

Կողմ Դեմ Ձեռնպահ

Արմեն Գրիգորյան
Վարսիկ Ասրյան
Անուշ Բաղդասարյան
Ատոմ Գագինյան
Արմեն Փ. Գրիգորյան
Արմեն Դավթյան
Արծրուն Հակոբյան
Ջոն Կիրակոսյան
Սյուզաննա Նազարյան
Մարտուն Մարտիրոսյան

Հմայակ Մարտիրոսյան
Աղունիկ Նալբանդյան
Լևոն Պապյան
Անդրանիկ Տոնոյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
Ստեփանավան համայնքի ավագանու
«12 » հունիսի 2026թ. թիվ 43-Ն որոշման

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 2026 թվականի բյուջեի եկամուտներում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.«Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ» եկամտատեսակը պակասեցնել 5098.9 հազ.դրամով և սահմանել 800586.8 հազ. դրամ:

2. «Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիա» եկամտատեսակը սահմանել 141.6 հազ. դրամ:

3. «Օրենքով և իրավական ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ» եկամտատեսակը ավելացնել 4718.9 հազ.դրամով, սահմանել 17718.9 հազ.դրամ

4. «Նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված ներքին աղբյուրներից)» եկամուտները պակասեցնել 63400.0 հազ. դրամով, սահմանել 537920.7857 հազ.դրամ:

Հայաստանի հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 2026 թվականի բյուջեի ծախսերում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Ստեփանավան համայնքի 2026 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» ծրագրի նախահաշվի (բաժին 1 խումբ 1 դաս 1)
   . հոդված «4222 – Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր» ծախսային հոդվածը պակասեցնել 1000.0 հազ. դրամով, I եռամսյակ 2000.0 հազ.դրամ և II եռամսյակից 4000.0 հազ. դրամ, ընդամենը՝ 4000.0 հազ. դրամ
   . հոդված «4232 – Համակարգչային ծառայություններ» ծախսային հոդվածը ավելացնել 30.0 հազ. դրամով, սահմանել I եռամսյակ 1500 հազ.դրամ, II եռամսյակ 2530.0 հազ.դրամ, III եռամսյակ 3030.0 հազ.դրամ, ընդամենը՝ 3611.0 հազ. դրամ
   . հոդված «4235 - Կառավարչական ծառայություններ» ծախսային հոդվածը պակասեցնել 1000.0 հազ. դրամով և սահմանել I եռամսյակից 1000.0 հազ.դրամ, ընդամենը՝ 1000.0 հազ. դրամ:

2. Ստեփանավան համայնքի 2026 թվականի բյուջեի «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» ծրագրի նախահաշվի (բաժին 1 խումբ 6 դաս 1)

. հոդված «4212 – Էներգետիկ ծառայություններ» ծախսային հոդվածը պակասեցնել 400.0 հազ.դրամ և սահմանել I , II և III եռամսյակ՝ 200.0 հազ. դրամ, IV եռամսյակից 300.0 հազ. դրամ, ընդամենը՝ 300.0 հազ. դրամ:

. հոդված «4213 – կոմունալ ծառայություններ» ծախսային հոդվածը ավելացնել 400.0 հազ. դրամով, սահմանել II եռամսյակ 200.0 հազ.դրամ, III եռամսյակ 300.0 հազ. դրամ, IV եռամսյակից 400.0 հազ. դրամ, ընդամենը՝ 400.0 հազ. դրամ:

. հոդված «4241 – Մասնագիտական ծառայություններ » ծախսային հոդվածը պակասեցնել 1000.0 հազ.դրամով, սահմանել I եռամսյակ 3000.0 հազ. դրամ, II եռամսյակ 4000.0 հազ.դրամ, III եռամսյակից 5000.0 հազ. դրամ, ընդամենը՝ 5000.0 հազ. դրամ:

. հոդված «4819 – Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» ծախսային հոդվածը ավելացնել 370.0 հազ.դրամով, սահմանել I եռամսյակ 200.0 հազ.դրամ, II եռամսյակից՝ 570.0 հազ.դրամ, ընդամենը՝ 570.0 հազ. դրամ:

. հոդված «4823– պարտադիր վճարներ» ծախսային հոդվածը ավելացնել 1000.0 հազ. դրամով, սահմանել I եռամսյակ 2500.0 հազ. դրամ, II եռամսյակ 4000.0 հազ. դրամ, III եռամսյակից 5000 .0 հազ. դրամ, ընդամենը՝ 5000.0 հազ. դրամ:

3. Ստեփանավան համայնքի 2026 թվականի բյուջեի «Գյուղատնտեսություն» ծրագրի նախահաշվի (բաժին 04 խումբ 02 դաս 1)

. հոդված «4729 – Այլ նպաստներ բյուջեից» ծախսային հոդվածը սահմանել 4718.9 հազ.դրամ՝ II եռամսյակից, , ընդամենը՝ 4718.9 հազ. դրամ:

4.Ստեփանավան համայնքի 2026 թվականի բյուջեի «Ճանապարհային տրանսպորտ» ծրագրի նախահաշվի (բաժին 4 խումբ 5 դաս 1)

. հոդված «4239 – Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» ծախսային հոդվածը պակասեցնել 1352.1 հազ. դրամով, սահմանել 0 դրամ:

5. Ստեփանավան համայնքի 2026 թվականի բյուջեի «Աղբահանում» ծրագրի նախահաշվի (բաժին 05 խումբ 1 դաս 1)

. հոդված «5129 – Այլ մեքենաներ և սարքավորումներ» ծախսային հոդվածը ավելացնել 13000.0 հազ.դրամով և սահմանել I եռամսյակ 11000.0 հազ. դրամ, II եռամսյակից 24000.0 հազ.դրամ, ընդամենը 24000.0 հազ.դրամ:

6. Ստեփանավան համայնքի 2026 թվականի բյուջեի «Փողոցների լուսավորում» ծրագրի նախահաշվի (բաժին 6 խումբ 4 դաս 1)

. հոդված «5112 – շենքերի և շինությունների շինարարություն» ծախսային հոդվածը ավելացնել 23600.0 հազ.դրամով, սահմանել՝ I եռամսյակ 10800.0 հազ. դրամ, II եռամսյակ 10800.0 հազ.դրամ, III եռամսյակից 34400.0 հազ. դրամ, ընդամենը՝ 34400.0 հազ. դրամ:

7. Ստեփանավան համայնքի 2026 թվականի բյուջեի «Հանգստի և սպորտի ծառայություններ» ծրագրի նախահաշվի (բաժին 8 խումբ 1 դաս 1)

. հոդված «4216 – Գույքի և սարքավորումների վարձակալություն» ծախսային հոդվածը պակասեցնել 1000.0 հազ.դրամով և սահմանել 0 դրամ:

. հոդված «4727 – Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» ծախսային հոդվածը սահմանել II եռամսյակ 1000.0 հազ.դրամ, III եռամսյակից 1820.0 հազ. դրամ ընդամենը՝ 1820.0 հազ. դրամ:

. հոդված «4729 – Այլ նպաստներ բյուջեից» պակասեցնել 1820.0 հազ.դրամ ծախսային հոդվածը սահմանել I եռամսյակ 1000.0 հազ.դրամ՝ II եռամսյակից՝ 1180.0 հազ.դրամ, ընդամենը՝ 1180.0 հազ. դրամ:

. հոդված «5113 – շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» ծախսային հոդվածը պակասեցնել 100000.0 հազ. դրամով, սահմանել I եռամսյակ 150331.403 հազ. դրամ, II եռամսյակ 360076.403 հազ.դրամ, III եռամսյակ 640076.403 հազ. դրամ, ընդամենը՝ 795702.236 հազ. դրամ:

8. Ստեփանավան համայնքի 2026 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» ծրագրի նախահաշվի (բաժին 8 խումբ 2 դաս 4)

. հոդված «4239 – Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ » ծախսային հոդվածը պակասեցնել 1005.2 հազ.դրամով, սահմանել I եռամսյակ 1000.0 հազ. դրամ, II եռամսյակ 4352.1 հազ.դրամ, III եռամսյակ 5562.1 հազ. դրամ, ընդամենը՝ 6352.7 հազ. դրամ:

. հոդված «4727 – Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» ծախսային հոդվածը սահմանել II եռամսյակից 500.0 հազ. դրամ ընդամենը՝ 500.0 հազ. դրամ:

. հոդված «4729 – Այլ նպաստներ բյուջեից» ծախսային հոդվածը պակասեցնել 500.0 հազ.դրամ, սահմանել II եռամսյակից 500.0 հազ.դրամ, ընդամենը՝ 500.0 հազ. դրամ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
Էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«12» հունիսի 2026 թվականի N 44-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով, 77-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

Կողմ Դեմ Ձեռնպահ

Արմեն Գրիգորյան
Վարսիկ Ասրյան
Անուշ Բաղդասարյան
Ատոմ Գագինյան
Արմեն Փ. Գրիգորյան
Արմեն Դավթյան
Արծրուն Հակոբյան
Ջոն Կիրակոսյան
Սյուզաննա Նազարյան
Մարտուն Մարտիրոսյան
Հմայակ Մարտիրոսյան
Աղունիկ Նալբանդյան
Լևոն Պապյան
Անդրանիկ Տոնոյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Հավելված 1
Ստեփանավան համայնքի ավագանու
«12 » հունիսի 2026թ. թիվ 44-Ա որոշման

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| հրավերով նախատեսված չափաբաժնի | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագ | անվանումը | ապրանքային նշանը, ֆիրմային անվ | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր քանակը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 39224341/ 504 | Աղբարկղ, պլաստմասե | նակը | Պլաստմասե աղբարկղ 1100լ (համաձայն EN 840 ստանդարտի) | հատ | 60 | 89940 | 5396400 |
| 2 | 39224341/ 505 | Աղբարկղ, պլաստմասե | | Պլաստմասե աղբարկղ 1100լ կրկնակի կափարիչով (համաձայն EN 840 ստանդարտի) | հատ | 100 | 94965 | 9496500 |

Հավելված 2
Ստեփանավան համայնքի ավագանու
«12 » հունիսի 2026թ. թիվ 44-Ա որոշման

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| գնումների պլանով նախատեսված միջանցիկ | անվանումը | ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 30239170 | Տպիչներ | | Տպիչի տեսակը՝ լազերային , բազմաֆունկցիոնալ սարք («3-ը 1-ում»), որը միավորում է սև-սպիտակ տպագրությունը, պատճենահանումը և սկանավորումը:<br>Միացման հնարավորություններ (Connectivity տպիչները միանում են USB, Ethernet (ցանցային) կապի միջոցով:<br>Ցանցային միացման հնարավորություն LAN, RJ 45:<br>• Կոմունիկացիոն հնարավորությունը նվազագույնը USB 2.0<br>• Օպերացիոն համակարգերի հետ համատեղելիությունը առնվազն Windows 7, 8, 8.1, 10, Mac OS,<br>• USB միացման լար նվազագույնը 1.5 մետր:<br>Բազմաֆունկցիոնալություն (MFP)՝ սկանավորում և պատճենահանում :<br>*ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ*<br>Մոնոխրոմ (սև-սպիտակ) լազերային տպագրություն: ADF, Արագություն. Մինչև 27 էջ/րոպե A4 ձևաչափի համար, թղթի երկու կողմում ավտոմատ տպելու հնարավորություն:<br>Տպագրության որակ (Resolution). 600 x 400 dpi (օպտիկական), մինչև 1200 x 600 dpi<br>*ՍԿԱՆԱՎՈՐՈՒՄ և ՊԱՏՃԵՆԱՀԱՆՈՒՄ*<br>Սկաներ. Գունավոր, հարթակային (flatbed):<br>Սկանավորման կետայնություն. Օպտիկական՝ մինչև 600 x 600 dpi, ընդլայնված՝ մինչև 9600 x 9600 dpi:<br>Պատճենահանման արագություն. Մինչև 18 պատճեն րոպեում:<br>Լրացուցիչ ֆունկցիաներ. ID քարտերի պատճենում, «2-ը 1-ում» պատճենում: | հատ | 120000 | 840000 | 7 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
Էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«12» հունիսի 2026 թվականի N 45-Ա

## ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԸ ԿԱԶՄՈՂ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի և Միավորված ազգերի կազմակերպության համակարգի մասը կազմող Միգրացիայի միջազգային կազմակերպության միջև կնքված նվիրաբերության ընդունման ձևը՝ Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Որպես նվիրաբերություն ընդունել Միավորված ազգերի կազմակերպության համակարգի մասը կազմող Միգրացիայի միջազգային կազմակերպության կողմից Ստեփանավան համայնքին տրված գույքը՝ համաձայն հավելվածի:
2. Նվիրաբերված գույքն ամրացնել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի հաշվեկշռին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արմեն Գրիգորյան | | | |
| Վարսիկ Ասրյան | | | |
| Անուշ Բաղդասարյան | | | |
| Ատոմ Գագինյան | | | |
| Արմեն Փ. Գրիգորյան | | | |
| Արմեն Դավթյան | | | |

Արծրուն Հակոբյան
Ջոն Կիրակոսյան
Սյուզաննա Նազարյան
Մարտուն Մարտիրոսյան
Հմայակ Մարտիրոսյան
Աղունիկ Նալբանդյան
Լևոն Պապյան
Անդրանիկ Տոնոյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
Ստեփանավան համայնքի ավագանու
«12 » հունիսի 2026թ. թիվ 45-Ա որոշման

ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿ

| Հ/Հ | Նկարագրություն | Քանակ | Սերիական համար |
|---|---|---|---|
| 1 | Էլեկտրական եռանիվ մոպեդ | 2 | LILCWUI0XS00000I4<br>LILCWUI06S00000I2 |
| 2 | Էլեկտրական քառանիվ մոպեդ | 1 | LBUSWLTB6SA010022 |
| 3 | Մոտոբլոկ ֆրեզով և գութանով | 1 | 24121106904 |
| 4 | Մոտոբլոկ հնձիչով | 1 | 25101037490 |
| 5 | Մոտոբլոկ ֆրեզով և հնձիչով | 1 | 24121106893 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
Էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հունիսի 2026 թվականի N 46-Ա

## «ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. «Ստեփանավանի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով, անորոշ ժամկետով ամրացնել գույք՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Արմեն Գրիգորյան | | |
| Վարսիկ Ասրյան | | |
| Անուշ Բաղդասարյան | | |
| Ատոմ Գագինյան | | |
| Արմեն Փ. Գրիգորյան | | |
| Արմեն Դավթյան | | |
| Արծրուն Հակոբյան | | |
| Ջոն Կիրակոսյան | | |
| Սյուզաննա Նազարյան | | |
| Մարտուն Մարտիրոսյան | | |
| Հմայակ Մարտիրոսյան | | |
| Աղունիկ Նալբանդյան | | |
| Լևոն Պապյան | | |
| Անդրանիկ Տոնոյան | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Հավելված
Ստեփանավան համայնքի ավագանու
«12 » հունիսի 2026թ. թիվ 46-Ա որոշման

ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿ

| Հ/Հ | Նկարագրություն | Քանակ | Սերիական համար |
|---|---|---|---|
| 1 | Էլեկտրական եռանիվ մոպեդ | 2 | LILCWUI0XS00000I4<br>LILCWUI06S00000I2 |
| 2 | Էլեկտրական քառանիվ մոպեդ | 1 | LBUSWLTB6SA010022 |
| 3 | Մոտոբլոկ ֆրեզով և գութանով | 1 | 24121106904 |
| 4 | Մոտոբլոկ հնձիչով | 1 | 25101037490 |
| 5 | Մոտոբլոկ ֆրեզով և հնձիչով | 1 | 24121106893 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
Էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«12» հունիսի 2026 թվականի N 47-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 12-ի N 286-Ն որոշման 8-րդ բաժնով և հիմք ընդունելով 02.06.2026 թվականի N 02062026-06-0048, 02.06.2026 թվականի N 02062026-06-0074 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Ստեփանավան համայնքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության.

   06-007-0624-0076 կադաստրային ծածկագրով, 1.22957 հա մակերեսով, վարելահող գործառնական նշանակության հողամասը 5 (հինգ) տարի ժամկետով վարձակալությամբ տրամադրելուն՝ մեկնարկային գին սահմանելով 18500 /տասնութ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:

   06-007-0624-0077 կադաստրային ծածկագրով, 1.22718 հա մակերեսով, վարելահող գործառնական նշանակության հողամասը 5 (հինգ) տարի ժամկետով վարձակալությամբ տրամադրելուն՝ մեկնարկային գին սահմանելով 18500 /տասնութ հազար հինգ հարյուր / ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արմեն Գրիգորյան | | | |
| Վարսիկ Ասրյան | | | |
| Անուշ Բաղդասարյան | | | |
| Ատոմ Գագինյան | | | |

Արմեն Փ. Գրիգորյան
Արմեն Դավթյան
Արծրուն Հակոբյան
Ջոն Կիրակոսյան
Սյուզաննա Նազարյան
Մարտուն Մարտիրոսյան
Հմայակ Մարտիրոսյան
Աղունիկ Նալբանդյան
Լևոն Պապյան
Անդրանիկ Տոնոյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
Էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հունիսի 2026 թվականի N 48-Ա

# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի զարգացման, քաղաքաշինական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտություն է առաջացել սահմանված կարգով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ և 67-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության կառավարության 27.04.2006 թվականի թիվ 570-Ն որոշումը, 21.01.2026 թվականի թիվ 21012026-06-0010, 26.01.2025 թվականի թիվ 26012025-06-0001, 24.01.2025 թվականի թիվ 24012025-06-0036, 24.01.2025 թվականի թիվ 24012025-06-0058, 24.01.2025 թվականի թիվ 24012025-06-0027, 05.02.2025 թվականի թիվ 05022025-06-0103, 19.01.2026 թվականի թիվ 19012026-06-0039, 30.12.2025 թվականի թիվ 30122025-06-0039, 24.02.2026 թվականի թիվ 24022026-06-0019, 20.02.2026 թվականի թիվ 20022026-06-0051, 06.11.2023 թվականի թիվ 06112023-06-0047, 20.01.2026 թվականի թիվ 20012026-06-0068 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Թույլատրել Ստեփանավան համայնքի ղեկավարին համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան, աճուրդով վաճառքի սահմանված կարգով օտարել համայնքի սեփականությունը հանդիսացող հետևյալ հողամասերը՝
   - Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Հ. Այվազովսկու փողոց 1/1 հողամաս հասցեում գտնվող, 06-007-0138-0025 կադաստրային ծածկագրով, 0.03289 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 1600000 /մեկ միլիոն վեց հարյուր հազար / ՀՀ դրամ:
   - Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Երիտասարդական փողոց 4-րդ փակուղի 9 հողամաս հասցեում գտնվող, 06-007-0344-0034

կադաստրային ծածկագրով, 0.12282 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 9200000 /ինը միլիոն երկու հարյուր հազար / ՀՀ դրամ:

- Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Երիտասարդական փողոց 4-րդ փակուղի 3 հողամաս հասցեում գտնվող, 06-007-0344-0031 կադաստրային ծածկագրով, 0.13557 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 10160000 /տասը միլիոն մեկ հարյուր վաթսուն հազար / ՀՀ դրամ:
- Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Երիտասարդական փողոց 4-րդ փակուղի 7 հողամաս հասցեում գտնվող 06-007-0344-0033 կադաստրային ծածկագրով, 0.12006 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 9000000 /ինը միլիոն / ՀՀ դրամ:
- Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Երիտասարդական փողոց 4-րդ փակուղի 5 հողամաս հասցեում գտնվող, 06-007-0344-0032 կադաստրային ծածկագրով, 0.12932 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 9690000 /ինը միլիոն վեց հարյուր իննսուն հազար / ՀՀ դրամ:
- Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Երիտասարդական փողոց 4-րդ փակուղի 1 հողամաս հասցեում գտնվող, 06-007-0344-0030 կադաստրային ծածկագրով 0.13476 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 10100000 /տասը միլիոն մեկ հարյուր հազար / ՀՀ դրամ:
- Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Վ. Բալյան փողոց 19/1 հողամաս հասցեում գտնվող, 06-007-0742-0016 կադաստրային ծածկագրով 0.01838 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 1020000 /մեկ միլիոն քսան հազար / ՀՀ դրամ:
- Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Դեսինի փողոց 11/1 հողամաս հասցեում գտնվող, 06-007-0105-0037 կադաստրային ծածկագրով 0.00561 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 280000 /երկու հարյուր ութսուն հազար / ՀՀ դրամ:
- Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Դեսինի փողոց 9/2 հողամաս հասցեում գտնվող, 06-007-0105-0038 կադաստրային ծածկագրով, 0.01422 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը,

մեկնարկային գին սահմանել՝ 670000 /վեց հարյուր յոթանասուն հազար / ՀՀ դրամ:

- Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Ռումինական փողոց 10/40 հողամաս հասցեում գտնվող, 06-007-0117-0060 կադաստրային ծածկագրով 0.0054 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 270000 /երկու հարյուր յոթանասուն հազար / ՀՀ դրամ:
- Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Մ. Խորենացու փողոց 3-րդ նրբանցք 17 հողամաս հասցեում գտնվող, 06-007-0246-0021 կադաստրային ծածկագրով 0.1 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 7510000 /յոթ միլիոն հինգ հարյուր տասը հազար / ՀՀ դրամ:
- Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Ա. Իսահակյան փողոց 35/2 հողամաս հասցեում գտնվող, 06-007-0058-0029 կադաստրային ծածկագրով 0.00422 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 420000 /չորս հարյուր քսան հազար / ՀՀ դրամ:

Համայնքի ավագանիներ.

Կողմ Դեմ Ձեռնպահ

Արմեն Գրիգորյան
Վարսիկ Ասրյան
Անուշ Բաղդասարյան
Ատոմ Գագինյան
Արմեն Ֆ. Գրիգորյան
Արմեն Դավթյան
Արծրուն Հակոբյան
Ջոն Կիրակոսյան
Սյուզաննա Նազարյան
Մարտուն Մարտիրոսյան
Հմայակ Մարտիրոսյան
Աղունիկ Նալբանդյան
Լևոն Պապյան
Անդրանիկ Տոնոյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
Էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հունիսի 2026 թվականի N 49-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14 ԱՊՐԻԼԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ N 32-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՍԱԳԱՄԱՐ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն Ս. Մորոզովի 20 մայիսի 2026 թվականի թիվ 15-26 գրությունը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ կետերով և 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու 2026 թվականի ապրիլի 14-ի N 32-Ա որոշման երկրորդ կետը փոփոխել և շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

   Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի վարչական սահմաններում գտնվող, «ՍԱԳԱՄԱՐ» ՓԲԸ-ին վարձակալության իրավունքով տրամադրված 1 հա մակերեսով հողամասի համար տարեկան վարձավճարի չափ սահմանել 500000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ, ընդհանուր՝ 23.095314 հա մակերեսով հողամասերի համար՝ 11547657 /տասնմեկ միլիոն հինգ հարյուր քառասունյոթ հազար վեց հարյուր հիսունյոթ/ ՀՀ դրամ արժողությամբ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Չի քվեարկել |
|---|---|---|---|
| Արմեն Գրիգորյան | | | |
| Վարսիկ Ասրյան | | | |
| Անուշ Բաղդասարյան | | | |
| Ատոմ Գագինյան | | | |

Արմեն Փ. Գրիգորյան

Արմեն Դավթյան

Արծրուն Հակոբյան

Ջոն Կիրակոսյան

Սյուզաննա Նազարյան

Մարտուն Մարտիրոսյան

Հմայակ Մարտիրոսյան

Աղունիկ Նալբանդյան

Լևոն Պապյան

Անդրանիկ Տոնոյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
Էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հունիսի 2026 թվականի N 50-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2021 թվականի նոյեմբերի 14-ի N Կ-26112021-06-0156 որոշումը, ՀՀ կառավարության 4 դեկտեմբերի 2025 թվականի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի վարչական տարածքում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող և Ստեփանավան համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի փոխանակման մասին» N 1757-Ա որոշումը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված հատակագծերը, 16.09.2025 թվականի N 16092025-06-0049 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ Ստեփանավան համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 16.09.2025 թվականի N 16092025-06-0049 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով պետական գրանցում ստացած 06-007-0267-0002 կադաստրային ծածկագրի համայնքային սեփականության հողամաս ընդգրկված է 1999 թվականի հուլիսի 10-ի հողի վարձակալության պայմանագրի 1. կետում նշված 19000 քմ մակերեսով հողամասում՝ տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 06-007-0271-0002 կադաստրային ծածկագրով հողամասի նկատմամբ 1999 թվականի հուլիսի 10-ին Ստեփանավանի քաղաքապետարանի՝ ի դեմս քաղաքապետ Ռ. Ս. Բաղրամյանի և «Քնարիկ» ՍՊԸ-ի՝ ի

դեմս նախագահ Կ. Կ. Ջուլհակյանի միջև կնքած հողի վարձակալության պայմանագրում կատարել համապատասխան փոփոխություն և պայմանագրի 1. կետում «19000 քմ» հողամասի մակերեսը փոխարինել «0.4725 հա» հողամասի մակերեսով համաձայն «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված հատակագծի:

2. Պայմանագրի առարկա հանդիսացող հողամասի մակերեսը ենթակա է ճշգրտման՝ Կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|

Արմեն Գրիգորյան
Վարսիկ Ասրյան
Անուշ Բաղդասարյան
Ատոմ Գագինյան
Արմեն Փ. Գրիգորյան
Արմեն Դավթյան
Արծրուն Հակոբյան
Ջոն Կիրակոսյան
Սյուզաննա Նազարյան
Մարտուն Մարտիրոսյան
Հմայակ Մարտիրոսյան
Աղունիկ Նալբանդյան
Լևոն Պապյան
Անդրանիկ Տոնոյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«12» հունիսի 2026 թվականի N 51-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՅՈԹԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ և 64-րդ հոդվածներով, Ստեփանավան համայնքի ավագանին `***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու տասներորդ նստաշրջանի յոթերորդ նիստի գումարման օր սահմանել 24.06.2026թ. ժամը 14$^{30}$-ին:

Համայնքի ավագանիներ.

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արմեն Գրիգորյան | | | |
| Վարսիկ Աարյան | | | |
| Անուշ Բաղդասարյան | | | |
| Ատոմ Գագինյան | | | |
| Արմեն Փ. Գրիգորյան | | | |
| Արմեն Դավթյան | | | |
| Արծրուն Հակոբյան | | | |
| Ջոն Կիրակոսյան | | | |
| Սյուզաննա Նազարյան | | | |
| Մարտուն Մարտիրոսյան | | | |
| Հմայակ Մարտիրոսյան | | | |
| Աղունիկ Նալբանդյան | | | |
| Լևոն Պապյան | | | |
| Անդրանիկ Տոնոյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ